ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնք
ք. Մարալիկ, Մադաթյան փ. 1, հեռ. 0242- 2-22-37, ani.shirak@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 35-Ա

<<05>> ապրիլի 2024 թվական քաղաք Մարալիկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻՑ ՍՊՈՐՏԱՅԻՆ ՄՐՑԱՇԱՐԵՐՈՒՄ ԲԱՐՁՐ ՆՎԱՃՈՒՄՆԵՐ ԳՐԱՆՑԱԾ ՄԱՐԶԻԿՆԵՐԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ԽՐԱԽՈՒՍԱՆՔԻ ՄԻՋՈՑՆԵՐ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՉԱՓ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի, 10-րդ հոդվածի 11-րդ մասի դրույթներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանու 2024 թվականի փետրվարի 15-ի N 7-Ա որոշմամբ հաստատված <<Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքում սոցիալական աջակցության ծառայությունների տրամադրման չափորոշիչները>>.

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանին որոշում է՝

1. Սահմանել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքից սպորտային մրցաշարերում բարձր նվաճումներ գրանցած մարզիկներին դրամական խրախուսանքի միջոցներ կիրառելու չափը՝ համաձայն հավելվածի:

2. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքից սպորտային մրցաշարերում բարձր նվաճումներ գրանցած մարզիկներին դրամական խրախուսանքի միջոցներ հատկացնել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի բյուջեի Գործառնական դասակարգման բաժին 10, խումբ 07, դաս 01 /Սոցիալական հատուկ արտոնություններ /այլ դասերին չպատկանող/ և տնտեսագիտական դասակարգման 4727 հոդվածից /կրթական, մշակութային և սպորտային նպաստներ բյուջեից/:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ

	Կողմ-11	Դեմ –0	Ձեռնպահ – 0
Ա. ՍԱՐԻԲԵԿՅԱՆ	----------	----------	----------

Է. ՍԱՂԱԹԵԼՅԱՆ	----------	----------	----------
Ռ. ԱՐՇԱԿՅԱՆ	----------	----------	----------
Է. ՈՒՌՈՒՏՅԱՆ	----------	----------	----------
Ա. ՇԱԲՈՅԱՆ	----------	----------	----------
Հ. ՋԱՏԻԿՅԱՆ	----------	----------	----------
Ժ. ԱԼԵՔՅԱՆ	----------	----------	----------
Գ. ԱՂԱԲԵԿՅԱՆ	----------	----------	----------
Ն. ՍԱՐՈՅԱՆ	----------	----------	----------
Գ. ԹԱԹԵՎՈՍՅԱՆ	----------	----------	----------
Մ. ԵՆՈՔՅԱՆ	----------	----------	----------

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ
ՂԵԿԱՎԱՐ **Ա. ՍԱՐԻԲԵԿՅԱՆ**

<<05>> ապրիլի 2024 թ.
քաղաք Մարալիկ

Հավելված
Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի
Անի համայնքի ավագանու 2024 թվականի
ապրիլի 5-ի N 35-Ա որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻՑ ՍՊՈՐՏԱՅԻՆ ՄՐՑԱՇԱՐԵՐՈՒՄ ԲԱՐՁՐ ՆՎԱՃՈՒՄՆԵՐ ԳՐԱՆՑԱԾ ՄԱՐԶԻԿՆԵՐԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ԽՐԱԽՈՒՍԱՆՔԻ ՄԻՋՈՑՆԵՐ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՉԱՓ

Հ/Հ	ՍՊՈՐՏԱՅԻՆ ՄՐՑԱՇԱՐԵՐԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	**Միանվագ տրամադրվող դրամական խրախուսանքի չափը /ՀՀ դրամ/**
1.	Օլիմպիական խաղերի ծրագրում ընդգրկված մարզաձևերի Հայաստանի երիտասարդների առաջնությունում ոսկե մեդալ նվաճած մարզիկներին.	50 000
2.	Օլիմպիական խաղերի ծրագրում ընդգրկված մարզաձևերի Հայաստանի մեծահասակների առաջնությունում ոսկե մեդալ նվաճած մարզիկներին.	70 000
3.	Օլիմպիական խաղերի ծրագրում ընդգրկված մարզաձևերի Եվրոպայի առաջնություններում ոսկե մեդալներ նվաճած մարզիկներին.	200 000
4.	Օլիմպիական խաղերի ծրագրում ընդգրկված մարզաձևերի Եվրոպայի առաջնություններում արծաթե մեդալներ նվաճած մարզիկներին.	150 000
5.	Օլիմպիական խաղերի ծրագրում ընդգրկված մարզաձևերի Եվրոպայի առաջնություններում բրոնզե մեդալներ նվաճած մարզիկներին.	100 000
6.	Օլիմպիական խաղերի ծրագրում ընդգրկված մարզաձևերի Աշխարհի առաջնություններում ոսկե մեդալներ նվաճած մարզիկներին.	300 000
7.	Օլիմպիական խաղերի ծրագրում ընդգրկված մարզաձևերի Աշխարհի առաջնություններում արծաթե մեդալներ նվաճած մարզիկներին.	200 000
8.	Օլիմպիական խաղերի ծրագրում ընդգրկված մարզաձևերի Աշխարհի առաջնություններում բրոնզե մեդալներ նվաճած մարզիկներին.	100 000
9.	Օլիմպիական խաղերի ծրագրում ընդգրկված մարզաձևերի Աշխարհի և Եվրոպայի առաջնություններին մասնակցող մարզիկներին տրամադրվող ճանապարհածախս.	Ըստ ծախսերի նախահաշվի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Ա. ՍԱՐԻԲԵԿՅԱՆ**